ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Ամառային կոստյումը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Բաճկոն Արտաքին (հիմնական) գործվածքը բաղադրությունը՝ 95% բամբակ 5% արհեստական մանրաթելերի առկայությամբ, մակերեսային խտությունը՝ 300 գր/մ2: Ներքին գրպանների գործվածքի բաղադրությունը՝ 95% բամբակ 5% արհեստական մանրաթելերի առկայությամբ, մակերեսային խտությունը՝ 300 գր/մ2: Գրպանները ներքնակները լինեն ֆիքսված եզրամասերում, որը կկանխի կախվածքը: Կտորը՝ ձգվող ջինսե գործվածքից (դենիմ թվիլ հյուսվածք/twill fabric)՝ նախնական կծկում անցած (pre-shrink) տեսակի: Գույնը՝ մուգ կապույտ (հիմնական), կարմիրի համադրությամբ, որոնց երանգները կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Բաճկոնի կրծքավանդակի, գրպանների վերևի (եզրային) ու մեջքի հատվածներում, գեղեցիկ համադրությամբ և համաչափությամբ ՝ 2 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ): Բաճկոնը՝ ուղիղ, կենտրոնական խոշոր և շոշափելիորեն նուրբ ատամներով կայծակ-շղթայով, որը կլինի համապատասխան բաճկոնի գույնի (թե ատամները, թե գործվածքը և թե բոնիչը) (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ): Բաճկոնի թևերի մանժետները ՝ ուղիղ և ունենան ձեռքով կառավարվող հանգույցներ կպչուն ժապավենով: Բաճկոնը կունենա 3 գրպան, որից կրծքավանդակի ձախ մասում՝ 1 գրպան՝ ուղղահայաց շղթայով՝ ՝ ոչ մանր և շոշափելիորեն նուրբ ատամներով կայծակ-շղթայով, որը կլինի համապատասխան բաճկոնի գույնի հետ (թե ատամները, թե գործվածքը և թե բոնիչը) և որի վրա կլինի (badge)-ի համար նախատեսված համապատասխան հանգույց, 2 կողքային գրպան թեքված մուտքով (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ): Բաճկոնի մեջքի թիկունքի վերևի կենտրոնական մասում կդաջվի ԲԷՑ-ի լոգոն

	ամբողջությամբ համապատասխան գունային գամայի և դիզայնի: Լոգոյի չափերը ՝ համաչափ և լավ տեսանելի (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ): Կարերը՝ բարձր երկակի ամրության, իրարից 8 մմ հեռավորության վրա: Բաճկոնի ներսամասում կփակցվի համազգեստի պիտակ, որի վրա նշված կլինի՝ Արտադրող կազմակերպության անվանումը, Չափսը (Եվրոպական և/կամ ամերկական սանդղակով), Գործվածքի բաղադրությունը, Խնամքի վերաբերյալ տեղեկությունը: Տաբատ Կտորի բաղադրությունը՝ 95 բամբակ 5% արհեստական մանրաթելերի առկայությամբ, մակերեսային խտությունը՝ 300 գր/մ2: Ներքին գրպանների գործվածքի բաղադրությունը՝ 95% բամբակ 5% արհեստական մանրաթելերի առկայությամբ մակերեսային խտությունը՝ 300 գր/մ2: Տաբատը՝ ուղիղ ձևածքով: Տաբատի գուլֆիկը կայծակ-շղթայով՝ ոչ մանր և շոշափելիորեն նուրբ ատամներով կայծակ-շղթայով, որը կլինի համապատասխան տաբատի գույնի (թե ատամները, թե գործվածքը և թե բոնիչը) և կոճակով (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ): Կտորը՝ ձգվող ջինսե գործվածքից (դենիմ թվիլ հյուսվածք/twill fabric)՝ նախնական կծկում անցած (pre-shrink) տեսակի: Գույնը՝ մուգ կապույտ, ծնկամասից ներքևի հատվածում լինի 2 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեն (կհամաձայնեցվի պատվիրատուի հետ): Տաբատը կունենա 3 գրպան, որից 2-ը՝ կողքային թեքված մուտքով, իսկ հետևի 1 գրպան ուղիղ մուտքով: Մշակված կլինի 4.0 սմ լայնության գոտիով: Գոտու վրա մշակված են 7 հատ կամրջակներ, որոնցից մեկը մշակված կլինի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա, ինչպես նաև 2 հատ ներկարված՝ 7.0 սմ երկարության և 4 սմ լայնության չափսը կարգավորելու համար նախատեսված ախլակներ, որոնք կոճկվում են 1 օղակով և 2 հատ կոճակով: Կարերը ՝ բարձր երկակի ամրության, իրարից 7 մմ հեռավորության վրա: Տաբատի ներսամասից՝ գոտու ներքին եզրի տակից, կարված կլինի պիտակ, որի վրա նշված կլինի՝ Արտադրող կազմակերպության անվանումը, Չափսը (Եվրոպական և/կամ ամերիկական սանդղակով), Գործվածքի բաղադրությունը, Խնամքի վերաբերյալ տեղեկությունը: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 10 լրակազմ, պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Պոլիէթիլենային պարկի մեջ լրացուցիչ կլինի նաև պիտակ, որի վրա նշված կլինի կոստյումի չափսերը: Ապրանքի տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է մատակարարը: Ապրանքները կլինեն չօգտագործված: Մասնակիցը կհամաձայնեցնի պատվիրատուի հետ՝ ամառային կոստյումի օգտագործվող գործվածքների/պարագաների, ինչպես նաև հետագայում նմուշի մեկ օրինակ: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պարտավոր է իր միջոցների հաշվին ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, իսկ անհրաժեշտության դեպքում նաև էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված բաճկոնի գործվածքի մակերեսային խտության և բաղադրության վերաբերյալ փորձագիտական արձանագրություն: Ինչպես նաև արտադրանքի գործվածքների (համաձայն սխեմատիկ պատկերի տրամադրված Արտադրողի/Վաճառողի կողմից) տոքսիկության ինդեքսը ջրի և օդի

	միջավայրերում համապատասխան թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին ՄՄ ՏԿ 017/2011 փաստաթղթի պահանջի համաձայն: Վերոնշյալ լաբորատորիաներում փորձաքննության անհնարինության դեպքում ներկայացնել վերոնշյալ ցուցանիշների վերաբերյալ արձանագրություն «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի, դրա անհնարինության դեպքում ԵԱՏՄ շրջանակներում գործող հավատարմագրված փորձարկման լաբորատորիայից: Ընդ որում նմուշառումը իրականացվի ընդունող ստորաբաժանում մատակարարված խմբաքանակից՝ լաբորատորիայի կողմից գործուղված համապատասխան ներկայացուցչի մասնակցությամբ: ԵԱՏՄ փորձագիտական լաբորատորիաների մասով նմուշառման համար լաբորատորիայի համպատասխան մասնագետի ներկայությունը պարտադիր չէ: Արձանագրությունը կազմված կլինի հետևյալ ցուցանիշների վերաբերյալ՝ Կտորի բաղադրությանը՝ 95% բամբակ, 5% արհեստական մանրաթելերի առկայություն, Մակերեսային խտությունը՝ 300 գր/մ2: Ամառային հանդերձանքի քանակները/չափսերը լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: Ամառային հագուստի կապույտ, կարմիր և ծիրանագույն երանգները կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Մատակարարը Պատվիրատուին կներկայացնի չափաբաժնի ընդհանուր քանակները, գումարած չափաբաժնից մեկ օրինակ՝ լաբորատոր փորձաքննության համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом «ԲԷՑ-ԷԱՃԱՊՁԲ-26/11» ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	